

**ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՄԻՆԶԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ² ԴԱՏԱՐԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Մինչդատական ակտերի դատական բողոքարկման սուբյեկտների շրջանակի պարզաբանման հարցը խիստ արդիական է ինչպես քրեադատավարական օրենսդրության, այնպես էլ իրավակիրառ գործունեության կատարելագործման համար: Այն պայմանավորված է մեղադրանքի և պաշտպանության կողմերի, ինչպես նաև մեղադրանքի կողմի սուբյեկտների միջև առաջացող իրավահարաբերությունների առանձնահատկություններով և բարդությամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից»:* Հիշյալ քրեադատավարական նորմի ձևակերպումը կարող է մեկնաբանվել այնպես, որ բողոքարկման սուբյեկտ են հանդիսանում նաև վարույթի հանրային մասնակիցներ:

¹ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., պրոֆեսոր Գ. Ս. Ղազինյան:

² Հոդվածի շրջանակներում «հետաքննության մարմնի աշխատակից, քննիչ, դատախազ, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմին» հասկացությունները դիտարկվում են որպես վարույթի հանրային մասնակիցներ, իսկ նրանց որոշումները, գործողությունները և անգործությունը՝ մինչդատական ակտեր:

րը՝ դատախազը, քննիչը, հետաքննության մարմինը, սակայն այս առումով հարց է առաջանում՝ որքանով է դա իրավաչափ:

Բարձրացված հարցը խիստ հետաքրքրական է թե՛ գործնական և թե՛ տեսական առումով: Այսպես, ՀՀ-ում վերջին ժամանակներում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունների արդյունքում ստեղծվեց քննչական միասնական անկախ մարմին՝ ՀՀ քննչական կոմիտեն¹: Դրան հաջորդեց դատախազության և քննչական մարմնի միջև գերատեսչական լարվածության առաջացումը, որի արդյունքում՝ քննարկման առարկա դարձավ նրանց միջև առաջացած վեճերն անկախ մարմնի՝ դատարանի կողմից լուծելու հարցը: Այս համատեքստում առավել ընդգծվեց քննիչի՝ որպես մինչդատական ակտերը (տվյալ դեպքում դատախազի ակտերը) դատական կարգով բողոքարկելու իրավական հնարավորության հարցը: Անգամ դատական պրակտիկայում գրանցվեց դատախազի որոշումը քննիչի կողմից դատարան բողոքարկելու դեպք², սակայն այդ հարցի կապակցությամբ դեռևս առկա չէ ձևավորված դատական պրակտիկա:

Ինչ վերաբերում է տեսական առումով հարցի արդիականությանը՝ հայրենական գրականությունում քննարկվող հարցը գրեթե ուսումնասիրված չէ: Առկա է ընդամենը մեկ գիտական հոդված, որի հեղինակները, ընդունելով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների պայմաններում բացակայում է քննիչի կողմից դատախազի որոշումները բողոքարկելու իրավական հնարավորությունը, գտնում են, որ «(...) դատախազի և քննիչի միջև իրավական վեճերը դատական կարգով լուծելու հարցի քննարկումը պետք է ընդգրկվի ՀՀ քրեական դատավարության բարեփոխումների օրակարգ»³: Իրենց դիրքորոշումը հեղինակները հիմնավորում են

¹ 2014 թվականի մայիսի 19-ին ընդունված և նույն թվականի հունիսի 28-ին ուժի մեջ մտած «ՀՀ քննչական կոմիտեի մասին» թիվ ՀՕ-25-Ն օրենք:

² ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի վկայակոչմամբ՝ քննիչ Էդ. Վ.-ի կողմից Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան բողոք է ներկայացվել քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին դատախազի որոշման դեմ՝ իր սահմանադրական իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելուն դատախազին պարտավորեցնելու պահանջով:

³ Տե՛ս Ա. *Հովսեփյան, Ա. Ղամբարյան*. Դատախազի և քննիչի միջև իրավական վեճերը դատական կարգով լուծելու հեռանկարները Հայաստանի Հան-

նրանով, որ քննիչի և դատախազի միջև ծագում են առավելապես քրեադատավարական իրավահարաբերություններ և որ դատախազի և քննիչի միջև առանձին իրավական վեճերը դատական կարգով լուծելու մոտեցման ընդդիմախոսների պատճառաբանությունների հիմքում դրված են «ոչ այնքան գիտական հիմնավորումներ, որքան էմոցիոնալ գնահատականներ» և «քննիչը փոքր դատախազ է» կամ «դատախազը և քննիչը միևնույն անձի տարբեր դրսևորումներն են» վիճիմասկյան վտանգավոր դատողություններ: Հեղինակների կարծիքով քննչական մարմինը և դրա պաշտոնատար անձինք դատարանում պետք է կարողանան վիճարկել, մասնավորապես, հետևյալ հարցերը՝

- դատախազության և քննչական մարմինների միջև իրավասության վերաբերյալ վեճը,

- հսկողություն իրականացնող դատախազի կողմից քննիչին վարույթից հեռացնելու որոշման օրինականությունը:

Լիովին համաձայն ենք հեղինակների այն դիրքորոշման հետ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումների պայմաններում բացակայում է քննիչի կողմից դատախազի որոշումները բողոքարկելու իրավական հնարավորությունը: Մասնավորապես, Օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասում բողոքարկման սուբյեկտների շարքում օգտագործվում է «դատավարության մասնակիցներ» եզրույթը, որն ընդգրկում է նաև վարույթի հանրային մասնակիցներին, սակայն նույն նորմով որպես մինչդատական ակտերը դատարան բողոքարկելու իրավունքի իրացման պայման նախատեսված է բողոքարկողի իրավունքների և օրինական շահերի խախտման առկայությունը: Մինչդեռ վարույթի հանրային մասնակիցները հանդիսանում են պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձինք, որոնք քրեական վարույթին մասնակցում են ի պաշտոնե և օժտված են պետաիշխանական լիազորություններով: Այլ խոսքով՝ վարույթի հանրային մասնակիցների կարգավիճակի բաղկացուցիչ տարր են նրանց լիազորությունները, այլ ոչ իրավունքները, իսկ քրեական վարույթի շրջանակներում նրանք սեփական շահեր չեն կարող ունենալ: Բացի այդ մինչդատական ակտերի դա-

րապետությունում/ Դատական իշխանություն, մայիս-հունիս 2015 5-6(191-192), Երևան, էջ 81:

տական ստուգման ընթացակարգն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա՝ ենթադրելով հակադիր շահերով օժտված երկու կողմ, մինչդեռ վարույթի հանրային մասնակիցները միննույն՝ մեղադրանքի կողմի սուբյեկտներ են, հետևաբար ողջամտորեն չեն կարող հետապնդել հակադիր շահեր:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է նաև նշել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 307-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ *«Մինչդատական ակտերի դեմ բողոքներ կարող է ներկայացնել վարույթի մասնավոր մասնակիցը, ինչպես նաև ցանկացած այլ անձ, եթե հիմնավորում է իր իրավաչափ շահերի նկատմամբ այդ ակտի անհամաչափ ներգործությունը»*: Փաստորեն՝ նախատեսվող կարգավորմամբ վերացվել է գործող նորմում առկա եզրութաբանական անորոշությունը՝ հստակ նախատեսելով, որ վարույթի մասնակիցներից բողոքարկման սուբյեկտ կարող են լինել մասնավոր մասնակիցները:

Ինչ վերաբերում է քննիչի կողմից մինչդատական ակտերը բողոքարկելու իրավական հնարավորություն նախատեսելու անհրաժեշտության հարցին՝ համաձայնելով նաև հեղինակների կողմից արտահայտված այն դիրքորոշման հետ, որ առկա իրավական կարգավորումների պայմաններում դատախազության և քննչական մարմինների միջև կարող են առաջանալ իրավասությունների հետ կապված մի շարք վեճեր, այնուամենայնիվ չենք կարող համաձայնել այդ վեճերը քրեական դատավարության շրջանակներում դատական կարգով լուծելու առաջարկի հետ: Այսպես, հեղինակների կողմից որպես իրավասությունների վերաբերյալ վեճի օրինակ ներկայացված՝ քննչական մարմնի ծառայողներին դատախազության կողմից ընդհանուր բնույթի հանձնարարություններ տալու դեպքն իր բնույթով վարչաիրավական է, քանի որ խոսքը գնում է նորմատիվ իրավական ակտեր ընդունելու Քննչական կողմիտի նախագահի և դատախազության լիազորությունների մասին: Այս դեպքում վարչաիրավական հարաբերությունները քրեական դատավարության կարգով լուծելու հեղինակների առաջարկը ընդունելի չի կարող լինել, քանի որ այդ իրավահարաբերությունները չեն մտնում քրեական դատավարության կարգավորման առարկայի մեջ: **Ինչ վերաբերում է քրեադատավարական բնույթի հավանական վեճերի առաջացմանը՝ կարծում ենք դրանք պետք է լուծվեն ոչ թե քրեական դատավարու-**

յան շրջանակներում դատարանի որոշումներով, այլ օրենսդրի կողմից՝ հիմնվելով քրեական դատավարությունում գործառության տարանջատման հիմնարար սկզբունքի վրա: Իսկ անձանց իրավունքների խախտման դեպքում արդեն իսկ համապատասխան անձն իրավասու է վարույթն իրականացնող մարմնի որոշումը, գործողությունը կամ անգործությունը դատական կարգով բողոքարկելու միջոցով պաշտպանել իր իրավունքները և օրինական շահերը:

Անդրադառնալով հսկողություն իրականացնող դատախազի կողմից քննիչին վարույթից հեռացնելու որոշման օրինականությունը դատական ստուգման ենթարկելու վերաբերյալ հեղինակների առաջարկին՝ գտնում ենք, որ այդ որոշումը դատական վերահսկողության առարկա դարձնելը չի բխում քրեական դատավարության խնդիրներից, բացի այդ էլ դա իր իրավական հետևանքների առումով կարող է վտանգել ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերը: Օրինակ, կարող են հարցեր բարձրացվել վարույթից «անօրինական» հեռացված քննիչի փոխարեն նշանակված նոր քննիչի կողմից կատարված գործողությունների օրինականության, ձեռք բերված ապացույցների թույլատրելիության վերաբերյալ և այլն, այդպիսով վտանգելով հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Հետաքրքրական է, որ Ռուսաստանի Դաշնության դատական բարեփոխումների 1992 թվականի հայեցակարգով առաջարկվում էր որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության եղանակ օրենսդրությամբ ամրագրել նաև վարույթն իրականացնող մարմինների միջև իրավական վեճերի դատական լուծումը¹:

Այս կապակցությամբ նշենք, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանների ընդլայնման հարցը քննարկելիս անհրաժեշտ է որպես ուղենիշ ընդունել այդ ինստիտուտի էությունը, խնդիրներն ու նպատակները: Քրեական դատավարության տեսությունում գերակշռում է այն տեսակետը, որ դատական վերահսկողությունն իրենից ներկայացնում է արդյունավետ և իրական դատավարական երաշխիք, որն ուղղված է անձի ի-

¹ St 'u Концепция судебной реформы в Российской Федерации, М., 1992, էջ 45:

րավունքները, ազատություններն ու օրինական շահերն ապահովելուն¹: Համաձայնելով վերոհիշյալ մոտեցման հետ՝ կարծում ենք, որ դատական վերահսկողության ինստիտուտի հիշյալ առանձնահատկություններով է պայմանավորված դատախազական հսկողության ինստիտուտի հետ մեկտեղ դրա նախատեսումը: Այն, հանդես գալով որպես յուրօրինակ հակակշիռ մինչդատական վարույթ իրականացնող մարմինների պետաշիջխանական լիազորություններին, հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռման կառուցակարգերից է: Հետևաբար՝ մինչդատական վարույթ իրականացնող մարմիններին մինչդատական ակտերը դատական կարգով բողոքարկելու լիազորության ընձեռումը կրվանդակազրկի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության՝ որպես անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված երաշխիքի և վարույթն իրականացնող մարմինների լիազորությունների հակակշռի էությունը:

Քննարկվող հարցի ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է հետազոտել նաև մինչդատական ակտերի օրինականության դատական ստուգման կառուցակարգի պատմական զարգացումը:

Հաշվի առնելով Հայաստանի պատմաքաղաքական անցյալը՝ մասնավորապես այն, որ Արևելյան Հայաստանը դեռևս 19-րդ դարի սկզբից միացել էր Ցարական Ռուսաստանին, իսկ 1922 թվականի դեկտեմբերի 30-ին՝ ԽՍՀՄ-ին, այդ ամբողջ ընթացքում նաև իրավա-

¹ St' u *Ковтун Н. Н.*, Судебный контроль в уголовном судопроизводстве России: Монография, Н. Н., Нижегородская правовая академия, 2002, էջ 45, *Муратова Н. Г.*, Система судебного контроля в уголовном судопроизводстве: вопросы теории, законодательного регулирования и практики, Автореф. дис., ... док. юрид. наук, Казань, 2004, էջ 9, *Колоколов Н. А.*, Методика проведения основных судебно-контрольных действий в стадии предварительного расследования, М., 2004, էջ 11, Судебный контроль в уголовном процессе, учебное пособие / под ред. *Н. А. Колоколова*, М., 2009, с. 17, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության: Հատուկ մաս, ԵՊՀ հրատ., 2010 թ., էջեր 241-245, *Dilbandyan. S.*, Role of Judicial Supervision over the Pre-Trial Proceedings in Ensuring Person's Rights and Freedom/ Materials of conference devoted to 80 th of the Faculty of Law of the Yerevan State University, Yerevan, YSU Press, 2014, pp. 322-323, և այլն:

կան իրականության տեսանկյունից ենթարկվելով, համապատասխանաբար, Յարական Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի օրենսդրության ազդեցությանը՝ մեր կողմից ուսումնասիրվող ինստիտուտի պատմական զարգացման հետազոտությունը կներկայացնենք Յարական Ռուսաստանի և ԽՍՀՄ-ի իրավական կարգավորումների համատեքստում:

Այսպես, Յարական Ռուսաստանի 1864 թվականի՝ Քրեական դատավարության կանոնադրության¹ 285-րդ հոդվածի համաձայն՝ դատախազն իրավունք ունի քննիչին առաջարկելու ձերբակալել ազատության մեջ թողնված կամ կալանքից ազատված մեղադրյալին: Եթե քննիչը հանդիպի այն կատարելու խոչընդոտների, քանի որ մեղադրյալը բավարար կասկած չի առաջացրել հանցագործության մեջ, ապա առանց այն կատարելու դիմում է դատարան: Մինևույն ժամանակ նույն Կանոնադրության 491-րդ հոդվածը սահմանում էր, որ վարույթին մասնակցող անձինք կարող են բողոքներ ներկայացնել ցանկացած վարույթային գործողության դեմ, որը խախտում կամ սահմանափակում է նրանց իրավունքները: Իսկ 493-րդ հոդվածով նախատեսված էր, որ ոստիկանության գործողությունների դեմ բողոքները բերվում են դատախազին, իսկ քննիչի՝ ինչպես իր իրավասությամբ, այնպես էլ դատախազի պահանջով կատարված գործողությունների դեմ՝ դատարան:

1864 թվականի կանոնադրության գործողությունը տարածվեց նաև Հայաստանի առաջին Հանրապետությունում: Մասնավորապես՝ անկախության հռչակումից հետո Հայաստանի Խորհուրդը 1918 թվականի դեկտեմբերի 6-ին վեց օրենքների ընդունմանը զուգահեռ՝ նույն օրը ընդունեց նաև «Նախկին Ռուսական կայսրության օրենքների գործադրման մասին Հայաստանի տերիտորիայի վրա» օրենքը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես գործողության մեջ էին դրվում նախկին Ռուսական կայսրության օրենքները՝ Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Մեյմի ու Հայաստանի խորհրդի փոփոխություններով ու լրացումներով²:

¹ Տե՛ս <http://constitution.garant.ru/history/act1600-1918/3137/>

² Տե՛ս, Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները 1918-1919 թթ., մաս I, Երևան, 1919 թ., էջեր 27-31, 65-66:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ Հայհեղկոմի 1920 թվականի դեկտեմբերի 21-ի դեկրետով Հայաստանի տարածքում չգործող հայտարարվեց առաջին հանրապետության օրենսդրությունը, իսկ վերացված օրենսդրության փոխարեն գործող համարվեց ՌԽՖՍՀ օրենսդրությունը, այն փոփոխություններով և լրացումներով, որոնք անհրաժեշտ կհամարեր հեղափոխական կառավարությունը՝ ելնելով հանրապետության առանձնահատկություններից¹: Իսկ 1922 թվականի ՌԽՍՀ Քրեական դատավարության օրենսգրքի XVIII գլխում ամրագրված էին քննիչի գործողությունների բողոքարկման վերաբերյալ նորմեր: Վերջիններիս բովանդակությունից հետևում է, որ բողոքարկման ենթակա էին քննիչի գործողությունները, ընդ որում դրանց դեմ բողոքները կարող էին ներկայացվել ինչպես դատախազին, այնպես էլ դատարան: Իսկ 224-րդ հոդվածով նախատեսված էր, որ քննիչի գործողությունների դեմ բերված բողոքի կապակցությամբ դատավորի կամ դատախազի որոշումը հայտարարվում է բողոքաբերին և անմիջապես ի կատար ածվում: Եթե քննիչը կամ բողոքաբերը համաձայն չեն դատախազի որոշմանը, ապա այն կարող են բողոքարկել դատարան: Նույնաբովանդակ կարգավորում էր նախատեսված 1934 թվականին ընդունված ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ գլխում:

1961-1991 թվականն ընկած ժամանակահատվածում գործող իրավական ակտերով ընդհանրապես բացառված էր մինչդատական վարույթ իրականացնող մարմինների գործողությունների՝ դատական կարգով բողոքարկման իրավական հնարավորությունը: Դրանք կարող էին բողոքարկվել միայն դատախազական կարգով, իսկ դատական վերահսկողությունն իրականացվում էր ռենիզիոն կարգով՝ գործի ըստ էության քննության ընթացքում: Այդ իրավիճակը ՀՀ-ում շարունակվեց մինչև նոր քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելը՝ 1999 թվականը:

Մեր կողմից ներկայացված պատմական վերլուծության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ մինչդատական վարույթ իրականացնող մարմինների միջև վեճը դատական կարգով լուծելու ի-

¹ Տե՛ս, *Ղազինյան Գ. Ս.*, Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևանի համալս. հրատ., Երևան, 2001 թ., էջ:

րավական հնարավորություն, ըստ էության, նախատեսված չի եղել: Նախատեսված էին միայն քննիչի և դատախազի միջև ծագող հարաբերություններին դատարանին մասնակից դարձնելու խիստ սահմանափակ դրսևորումներ: Այսպես՝ անձին կալանավորելու դատախազի առաջարկն իրականացնելու հիմքեր չտեսնելու դեպքում քննիչն իրավասու էր հարցի լուծումը փոխանցել դատարանին: Վերջինս էլ ըստ էության ուղղված էր մեղադրյալի իրավունքների պաշտպանությանը (1864 թվականի Կանոնադրություն): Այնուհետև, դատախազի որոշումը քննիչի կողմից դատարան բողոքարկելու իրավունքը տարածվում էր միայն իր գործողության դեմ բերված բողոքի լուծման արդյունքում դատախազի կայացված որոշումը բողոքարկելու դեպքերի վրա: Մակայն այս դեպքում նույնպես դատախազի և քննիչի միջև վեճի առկայության մասին դատողություններ հնարավոր չէ անել, հակառակ դեպքում ստիպված կլինենք պնդել, որ դատախազի կողմից դատարանի որոշումը բողոքարկելը ենթադրում է դատարանի և դատախազի միջև վեճի առկայություն: Հարկ է նկատել, որ քննարկվող իրավիճակները, ըստ էության, պայմանավորված էին այն հանգամանքով, որ այդ ժամանակաշրջանում, ի տարբերություն ներկայիս իրականության, քննիչի կարգավիճակը ենթադրում էր լիազորությունների բավականին լայն շրջանակ, դատավարական ինքնուրույնության և անկախության բարձր աստիճան:

Ուսումնասիրության բազմակողմանիությունն ապահովելու տեսանկյունից անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև քննարկվող հարցի կապակցությամբ Ռուսաստանի քրեական դատավարության տեսությունում, ինչպես նաև պրակտիկայում ձևավորված մոտեցումներին՝ այն հաշվառմամբ, որ ՌԴ օրենսդիրը մինչդատական ակտերի բողոքարկման սուբյեկտների շրջանակը նախանշելիս նույնպես օգտագործում է դատավարության մասնակիցներ հասկացությունը¹ (ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մաս):

¹ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 58-րդ կետի համաձայն քրեական դատավարության մասնակիցներն են անձինք, ովքեր մասնակցում են քրեական դատավարությանը:

Ինչպես ՌԴ իրավաբանական գրականությունում, այնպես էլ պրակտիկ աշխատողների մոտ¹, միասնական մոտեցում չի ձևավորվել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում մինչդատական վարույթ իրականացնող մարմինների կողմից դատարան բողոք ներկայացնելու իրավասության կապակցությամբ:

Այսպես գիտնականների մի մասը քննիչի կողմից մինչդատական ակտերը դատարան բողոքարկելու հնարավորությունն ընդհանրապես չեն քննարկում² կամ այդպիսին բացառում են³:

¹ ՌԴ Սահմանադրական դատարանը 2005 թվականի հունիսի 23-ի թիվ 269-Օ որոշմամբ, անդրադառնալով քննարկվող հարցին, ըստ էության, հաստատեց մինչդատական վարույթ իրականացնող մարմինների որոշումները բողոքարկելու քննիչի լիազորությունը: Մասնավորապես, ՌԴ Սահմանադրական դատարանը նշել է, որ քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածը չի պարունակում դատավարական կարգավիճակով պայմանավորված քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքները սահմանափակող որևէ նորմ: Ընդհակառակը, այն, ինչպես ինքնին, այնպես էլ 19-րդ և 123-րդ հոդվածների հետ փոխկապակցված ուղղակիորեն ամրագրում է դատավարության մասնակիցների և այլ անձանց համար այդպիսի գործողությունների և որոշումների բողոքարկման իրավունք, էթե դրանք ունակ են վնաս պատճառել նրանց սահմանադրական իրավունքներին և ազատություններին, կամ խոչընդոտել արդարադատության մատչելիությունը: Սակայն քննարկվող որոշումը պաշտոնապես չի հրապարակվել, հետևաբար պարտադիր ուժ չունի:

² Տե՛ս *Ярковой В. А.*, Пределы судебного контроля в досудебном производстве // Уголовный процесс, 2005, № 8; *Лалиев А. И.*, Проблемы судебного обжалования действий (бездействия) и решений органов предварительного расследования, Дис. ... канд. юрид. наук, Краснодар 2011, էջեր 73-102:

³ Տե՛ս *Коновалов Ю. П., Рахматуллина Н. Г.*, Проблемы совершенствования законодательства, регламентирующего подачу жалоб в порядке статьи 125 Уголовно-процессуального кодекса Российской Федерации // Совершенствование законодательства в сфере защиты прав человека и гражданина: проблемы и перспективы: материалы Международной научно-практической конференции, Иркутск, 5 апреля 2013 г., в 2 ч. - Иркутск, Изд-во БГУЭП, 2013, Ч. 1., էջ154, *Шадрин В. С.*, Уголовно-процессуальная деятельность прокурора и органов предварительного расследования: Досудебное производство. Санкт-Петербургский институт Генеральной прокуратуры Российской Федерации, 2005, էջ 26, *Быков В. М.*, Следователь в уголовном процессе России. М., Юр-

Գիտնականների երկրորդ խումբն էլ գտնում է, որ քննիչը պետք է օժտված լինի մինչդատական ակտերը դատարան բողոքարկելու իրավունքով: Այսպես, Ֆ. Բագաուտդինովը և Օ.Խիմիչևան գտնում են, որ մինչդատական վարույթ իրականացնող մարմինների համար բողոքարկման իրավունք նախատեսված չէ, սակայն այդպիսին պետք է նախատեսվի՝ ելնելով կողմերի հավասարության սկզբունքից¹ և հատկապես քննիչի համար՝ իր դատավարական ինքնուրույնությունը ամրապնդելու անհրաժեշտությունից՝ ապահովելով մեղադրանքի կողմի սուբյեկտ չհանդիսացող մարմնի վերահսկողությունը²: Տ.Պոպովայի կարծիքով քրեական գործի քննության համար ստրատեգիական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ քննիչի, քննչական բաժնի պետի և դատախազի միջև դատավարական վեճերը լուծելու լիազորությունը դատարանին վերապահելը հնարավորություն կընձեռնի ոչ միայն իրականում ապահովել քննիչի դատավարական ինքնուրույնությունը, այլև կբարձրացնի դատախազական հսկողության արդյունավետությունը՝ բացառելով քրեական գործով վճռորոշ նշանակություն ունեցող որոշումների կայացման ընթացքում գերատեսչական ազդեցությունը և կորպորատիվ շահերը³: Դատարանը պատասխանատու չէ մինչդատական վարույթի քանակական և որակական ցուցանիշների համար, միևնույն ժամանակ, շահագրգռված է վերացնել այդ փուլում թույլ տրվող խախտումները, քանի որ նախաքննության օրինականությունը և հիմնավորվածությո-

литинформ, 2014, էջ 101, *Александров А. С.*, Вопросы взаимодействия прокурора, руководителя следственного органа и следователя в ходе досудебного производства по уголовному делу, Вестник МВД, 2009, N1, էջ 53:

¹ St 'u *Багаутдинов Ф. Н.*, Публичные и личные интересы в российском уголовном судопроизводстве и гарантии их обеспечения на предварительном следствии/ автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук, Москва, 2004, էջ 50:

² St 'u *Химичева О.В.* Концептуальные основы процессуального контроля и надзора на досудебных стадиях уголовного судопроизводства. автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук – Москва, 2004, էջ 41:

³ St 'u *Попова Т. Ю.*, Уголовно-процессуальный статус руководителя следственного органа, М., Юрлитинформ, 2013, էջ 107:

յունը քրեական գործով արդարադատության հիմքն են¹: Ա. Բաստրիկինը նշում է, որ այս մոտեցման ընդդիմախոսները կարող են նշել, որ դատարանի կողմից վեճերի լուծումը կարող է քրեական գործերի քննության ժամկետների ձգձգման պատճառ դառնալ, սակայն դատարանում՝ դատախազի, քննիչի և քննչական բաժնի պետի երկխոսությունը կլինի հրապարակային²:

Չենք կարող ամբողջությամբ համաձայնել հիշատակված հեղինակների դիրքորոշումների հետ: Այսպես, Ֆ. Բագաուտդինովի դիրքորոշման կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ հեղինակի կողմից կողմերի իրավահավասարության համատեքստում խոսվում է ոչ թե վարույթն իրականացնող մարմինների միջև վեճի առկայության դեպքում դատարան դիմելու, այլ ընդհանրապես մեղադրանքի կողմի սուբյեկտների կողմից դատարան դիմելու միջոցով իր իրավունքները չարաշահող դատավարության մասնակցի համար իրավունքի իրականացման կարգ, իրավունքի սահմանափակում նախատեսելու դեպքերի մասին: Նման մոտեցումն անընդունելի է այն հաշվառմամբ, որ վարույթն իրականացնող մարմիններն օժտված են պետաիշխանական լիազորություններով և իրավասու են իրենց ակտերով սահմանել կամ սահմանափակել քրեական դատավարության մնացած մասնակիցների իրավունքները, ինչն էլ համապատասխան շահագրգիռ մասնակցի կողմից կարող է բողոքարկվել դատարան:

Ինչ վերաբերում է քննիչի դատավարական ինքնուրույնությունը և մինչդատական վարույթի օրինականությունն առավելագույնս ապահովելու վերաբերյալ հեղինակների հիմնավորումներին՝ արժեվորելով քննիչի դատավարական ինքնուրույնության սկզբունքի կարևորությունը քրեական դատավարությունում՝ հարկ ենք համարում պնդել, որ մինչդատական վարույթի օրինականության ապահովումը դատական վերահսկողության իրականացման արդյունքն է, որն իրացվում է անձի իրավունքների և օրինական շահերի ապահովումը երաշխավորելու նպատակով և միջոցով: Այլ խոսքով՝ դատական վերահսկողությունն իրավունքների պաշտպանության դատական ձևի բաղկացուցիչ մասն է և որպես այդպիսին չի կարող և

¹ St 'u *Семенов В. А., Нагоева М. А.*, Процессуальные полномочия следователя в досудебном производстве, Краснодар, 2011, էջ 85:

² St 'u *Бастрыкин А.*, Следствие требует тишины, Известия, 2 октября, 2007, էջ 3:

չպետք է ենթադրի մինչդատական վարույթի օրինականության վերացարկված կամ ընդհանուր վերահսկողություն, ինչպես նաև քննիչի դատավարական ինքնուրույնության երաշխավորում:

Կարծում ենք նաև, որ գործերի քննության ժամկետների ձգձգման վտանգի մասին հնարավոր փաստարկին Ա. Բաստրիկինի ներկայացրած հակափաստարկն այն մասին, որ դատարանում՝ դատախազի, քննիչի և քննչական բաժնի պետի երկխոսությունը կլինի հրապարակային, չի կարող ողջամիտ հակակշիռ լինել միջազգային մի շարք փաստաթղթերով¹ երաշխավորված՝ անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքին: Ավելին՝ նման մոտեցումը կհակասի այն սկզբունքին, որ անձը չպետք է պատասխանատվություն կրի պետական մարմինների սխալների ու բացթողումների համար²:

Այս առումով թերևս կհամաձայնենք Վ. Բոժևի այն նկատառման հետ, որ դատախազը և քննիչը քրեական դատավարությունում ներկայացնում են մեկ կողմ՝ մեղադրանքի կողմը, հետևաբար կարևոր է նախևառաջ ապահովել նրանց միասնությունը, փոխգործակցությունը և պատասխանատվությունը, այլ ոչ թե «ներքին մրցակցությունը»³:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը չի կարող օգտագործվել պետական մարմինների՝ մինչդատական վարույթ իրականացնող մարմինների կողմից իրենց տարաձայնությունները լուծելու համար, իսկ դատարանն էլ չի կարող մինչդատական վարույթի շրջանակներում դատախազի և քննիչի միջև վեճով

¹ Տե՛ս, օրինակ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 6-րդ հոդվածներ:

² «Անձը չպետք է պատասխանատվություն կրի պետական մարմինների սխալների ու բացթողումների համար» սկզբունքի մասին տե՛ս, օրինակ, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանություններ/ընդհանուր գիտական խմբագրությամբ *Ա. Մկրտումյանի, Դ. Ավետիսյանի, Վ. Ենգիբարյանի, Ռ. Մելիքյանի*, -Եր.: «Ասողիկ», 2011, էջ 138:

³ Տե՛ս *u Божьев В. П.*, О властных субъектах уголовного процесса в досудебном производстве // Российский следователь, N 15, 2009, էջ 29:

արբիտր լինել, քանի որ նշվածը չի բխում քննարկվող ինստիտուտի էությունից, վտանգում է քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը ի վնաս մասնավոր շահի, ինչպես նաև խարխիլում քրեական դատավարության համար հիմնաքարային՝ գործառութային տարանջատման սկզբունքը:

Անի Դանիելյան

Ասպիրանտ Կաթեդրայի քրեական գործընթացի և քրեական գործառութային գործառութային ԵԳՄ

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОМЕРНОСТИ ОБЖАЛОВАНИЯ ДОСУДЕБНЫХ АКТОВ В СУД ПУБЛИЧНЫМИ УЧАСТНИКАМИ УГОЛОВНОГО ПРОЦЕССА

В настоящей статье автор рассматривает вопрос, представляющий научную и практическую актуальность, о том являются ли публичные участники уголовного процесса субъектом обжалования досудебных актов в суд. В частности автор на примере следователя затрагивает вопросы касающиеся существования юридической возможности обжалования в суд досудебных актов публичными участниками процесса, его правомерности и целесообразности в контексте особенностей института судебного контроля на досудебном производстве.

Соответствующие выводы автора основаны на итогах обсуждения существующих научных подходов, а также исторического и сравнительно-правового анализа поднятых вопросов. В частности в статье изучены и проанализированы историческое развитие обсуждаемого вопроса, а также научный и практический опыт Российской Федерации, законодательные регулирования которой по данному предмету схожи с регулированиями УПК РА.

SOME PROBLEMS OF LAWFULNESS OF APPEALING PRE-TRIAL ACTS TO THE COURT BY THE PUBLIC PARTICIPANTS OF CRIMINAL PROCEEDINGS

In the article author examines the issue of scientific and practical relevance of whether the public participants of criminal proceedings have right to appeal pre-trial acts to the court. In particular, by the example of an investigator the author analyzes the issues relating to the legal existence of the possibility of appeal to court pre-trial acts of public participants of criminal proceedings, its legitimacy and appropriateness in the context of the characteristics of the institute of judicial control upon pre-trial proceedings.

Corresponding conclusions of author's are based on the results of the review and discussion of current scientific approaches, as well as historical and legal-comparative analysis of the issues raised. In particular, the article studied and analyzed the historical development of the issue, and scientific and practical experience of the Russian Federation, whose legislative regulation on the subject resembles to the regulation of RA Criminal Procedure Code.

Բանալի բառեր. *մինչդատական վարույթ, դատական վերահսկողություն, մինչդատական ակտեր, վարույթի հանրային մասնակիցներ, բողոքարկման սուբյեկտ, իրավունքների և օրինական շահերի խախտում, հանրային և մասնավոր շահերի հավասարակշռում:*

Ключевые слова: *Досудебное производство, судебный контроль, досудебные акты, публичные участники уголовного процесса, субъект обжалования, нарушение прав и законных интересов, балансирование общественных и частных интересов, функциональное разделение.*

Key words: *Pre-trial proceedings, judicial supervision, pre-trial acts, public participants of criminal proceedings, subject of appeal, violation of rights and legitimate interests, balancing public and private interests, functional separation.*